



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Գեղարունիքի մարզի Ն. Գետաշեն գյուղի Ա. եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Պարուսիկ Բեգլարյան

Երևան 2023

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Դասի պանավորումը և մեթոդների կիրառումը տարբեր փուլերում.....	6
1.1. Ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները.....	7
1.3. Ժամանակակից մեթոդների դերը դասի պլանավորման տարբեր փուլերում.....	8
Գլուխ 2. Սովորողների հետաքրքրությունը բարձրացնող մեթոդներ և մոդելներ.....	11
Եզրակացություն.....	22
Գրականություն.....	25

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը:*

*Բ.Ք. Սքիններ*

Ինչպիսի՞ հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը: Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որ նրանց տալիս ենք այսօր: Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման գործում և արտացոլում է աշխարհի այն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար: «Մանկավարժություն» եզրույթն այստեղ գործածվում է լայն իմաստով՝ վերաբերելով ուսումնառության գործընթացի կազմակերպմանը: Մանկավարժությունն, այսպիսով, կենտրոնանում է այն հարցի վրա, թե ինչպես կազմակերպել ուսուցումը, ուսումնառությունը եւ գնահատումը՝ կրթական չափորոշչի և ծրագրերի վերաբերությամբ: Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում դերդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեության և դրանցից բխող դիդակտիկ տարրեր: Դասի արդյունավետության հետ կապված մտահղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է դասի ամենօրյա պլանավորումը, որի բաղադրիչներն են՝ դասի թեման, նպատակները (կրթական, զարգացնող, դաստիարակչական), տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման), հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխումը, հենքային հասկացությունների ձևավորման

փուլերը (հասկացությունների ներմուծում, օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում, էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում), դասավանդման մեթոդները՝ բանավոր կամ գրավոր: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ: Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները ի գործու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը:

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝ դասի սկզբի կազմակերպումը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտումը, աշխատանք ուսումնասիրող նյութի հետ, ծանոթացում նոր նյութի հետ, գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում, գիտելիքների համակարգում և ընդհանրացում, տնային աշխատանքի կազմակերպում:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը: Եթե առարկայի դասավանդման մեջ ինտեգրվեն նորագույն տեխնոլոգիաներ ու մեթոդներ, ապա դրանք արդյունավետ

կղարձենն դասապրոցեսն ու թեմայի ընկալումը:Դասի պլանը գրելիս պետք է ուշադրություն դարձնել ժամաբաշխմանը,որը ևս արդյունավետության միջոց է

Կրթության ոլորտը փոխվում է այնպիսի արագ տեմպերով ,որ մենք պետք է հետևենք և հարմարվենք ավելի ժամանակակից ռազմավարություններին, հակառակ դեպքում մեզ համար կարող է դժվար լինել:Ի տարբերություն ավանդական ուսուցման , որը հիմնականում կենտրոնանում է այն բանին վրա, թե որքան գիտելիք կարող եք փոխանցել ձեր աշակերտներին , նորարարական ուղիները խորանում են այն բանի մեջ, թե ինչ են իրականում դասաժամին վերցնում աշակերտները:

Պլանավորումը ստեղծագործ և լուրջ աշխատանք է:

**Ուստի պլանավորած յուրաքանչյուր դասից հետո պետք է վերլուծել՝ հաջորդ դասն առավել արդյունավետ դարձնելու համար**

**1.հասավ նպատակին**

**2.ճիշտ էին մեթոդները**

**3.Ժամանակի բաշխումը իրատեսական էր**

**4.ինչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել**

Հետազոտության հիմնական նպատակն է նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ մեծացնել աշակերտների հետաքրքրությունը ուսումնական գործունեության նկատմամբ՝ նախատեսելով ծրագրային նյութի ներկայացման և յուրացման նոր ձևեր: **Հետազոտության խնդիրներն են.**

- Գտնել դասի պլանավորման արդյունավետ մեթոդներ
- Որոշել երեխաների հետաքրքրության մակարդակը սովորելու տեսանկյունից
- Փորձարկել տարբեր մեթոդներ և մոդելներ, վերլուծել առաջադիմությունը
- Առանձնացնել ամենաարդյունավետները:

## ԳԼՈՒԽ 1. Դասի պանավորումը և մեթոդների կիրառումը տարբեր փուլերում

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: „Ուսուցման մեթոդը՝ բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել/ կրթության բովանդակություն/, ինչի՞ համար սովորեցնել/ կրթության նպատակներ/ և ի՞նչպես սովորեցնել/ ուսուցման մեթոդիկա/: Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ: Մեթոդը, հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկ, իրար է կապում ուսուցման նպատակը և վերջնական արդյունքը: Ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

- \_ ինչպե՞ս հաջող պլանավորել
- \_ ինչպե՞ս հաջող իրականացնել դասը
- \_ ինչպե՞ս կանխատեսել արդյունքները
- \_ ինչպե՞ս վերլուծել հաղորդություններն ու բացթողումները
- \_ ինչպե՞ս ձևավորել հաղորդակցական կարողություններ

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

## 1.1. Ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդներ

Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է /metodos/, որը բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ մի տեղ տանող ուղի, ճանապարհ նպատակին հասնելու համար: Մասնագիտական գրականության ընդունված և տարածված են մեթոդի հետևյալ սահմանումները.

– ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակ՝ ուղղված կրթության բովանդակության յուրացմանը.

– ուսուցման այնպիսի ձև, որ կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա.

– ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոց.

– ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողի միջև փոխազդեցություն արտացոլող մոտեցումների ու հնարների համախումբ, ուսուցչից դեպի աշակերտը գնացող մտքի ճանապարհ.

– սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա.

– որևէ տիպի խնդիրների լուծման անհրաժեշտ գործողությունների վերջավոր, կարգավորված բազմություն:

Սահմանումների բազմազանության մեջ նկատելի են որոշակի ընդհանրություններ: Այսպես, օրինակ, համարյա բոլոր սահմանումներում մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց կամ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն: Եթե փորձենք ևս մեկ անգամ բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն ուսուցչի և աշակերտի համագործակցությունն է՝ ուսումնական նպատակներն իրականացնելու համար: Այսպիսով՝ ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն:

Բայց մեթոդների իմացությունը բավարար չէ ուսուցումը արդյունավետ իրականացնելու համար: Շատ կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունն ու կիրառելու կարողությունը: Մեթոդների ընտրելու ու կիրառելու կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով.

– սովորողը պետք է հստակ իմանա ի՞նչ է անում և ինչու՞

– սովորողը պետք է միշտ տեղյակ լինի ի՞նչ է իրենից պահանջվում

– սովորողը պետք է վստահ լինի, որ ուսուցիչն աջակցելու և օգնելու է

– ուսուցիչը պետք է կարողանա համադրել բազմազան մեթոդները նույնքան բազմազան արդյունքների հետ:

Մեթոդի բաղկացուցիչ մասն է կազմում հնարը: Եթե մեթոդը ուսումնական նպատակը տանող ճանապարհն է, ապա մեթոդական հնարները ընթացքում հանդիպող խնդիրները լուծելու, դժվարությունները հաղթահարելու միջոցներ են: Յուրաքանչյուր մեթոդում կարելի է առանձնացնել բազմաթիվ հնարներ: Ուրեմն մեթոդը հնարների ամբողջություն է:

Ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ սովանդական և ժամանակակից մեթոդներ: Սովանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության՝ գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

**1.2. Ժամանակակից մեթոդների դերը դասի պլանավորման տարբեր փուլերում**  
Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.



- Աշակերտը նյութը սովորում է ինչ որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի.

- Աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը.

- Աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար.

- Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ.

- Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը.

- Ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

### **Գործընթացին ուղղված մեթոդներ և մոտեցումներ**

- Ժողովրդավարական մոտեցումների և վարքագծերի մոդելավորում.

- Ժողովրդավարական գործընթացները դասապրոցեսում.

- Համագործակցային ուսումնառություն.

- Նախագծային ուսումնառություն.

- Ուսումնառություն ծառայության միջոցով:

Նախագծային ուսուցումը մեթոդ է, որի իրականացման ընթացքում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ: Նախագծային մեթոդը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆ. Եվ. Ս. Պոլատ): «Նախագիծ» հասկացությունը լայն առումով ընկալվում է որպես ինչ-որ մտահղացում, պլանավորում: Նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, քննադատական և ստեղծագործական

մտածողության ձևավորումն ու զարգացումը: Նախագծային ուսումնասիրությունը սվորողին դարձնում է շփվող, ստեղծարար, օգնում է կիրառել տեսական գիտելիքները: Այսպիսի աշխատանքի արդյունքում ձեռք բերված գիտելիքները հիմնված են փորձի վրա: 20-րդ դարի 20-ական թվականներին, նրա հիմնական գաղափարները մշակել են Ջոն Դյուին և նրա աշակերտ Ուիլյամ Կիլպատրիկը: Այս գիտնականները համոզված էին, որ ուսուցումը պետք է կողմնորոշված լինի դեպի սովորողների նպատակաուղղված գործունեությունը՝ նրանց անձնական հետաքրքրություններին համապատասխան: Ուսուցման գործընթացի դիդակտիկական հիմնական միավորը, ըստ նրանց, կյանքից վերցված և սովորողի համար 6 նշանակալի պրոբլեմն է, իրավիճակը, ինչը սովորողները ինքնուրույնաբար կամ խմբի հետ համատեղ ուժերով պետք է փորձեն հետազոտել: «Նախագիծ» բառը առաջացել է լատիներեն «projectus» բառից, որը նշանակում է «առաջ նետված», «աչքի ընկնող»: Եվ իրականում նախագիծը պլանավորելիս ուսուցիչը, այսպես ասած, նայում է ապագային, պատկերացնում է մի բան, որը աշակերտը կարող է ստեղծել կամ ստանալ որոշակի ջանքերով: Նախագծային մեթոդի օգտագործումը ենթադրում է ուսուցչի դերի արմատական փոփոխություն: Նա պետք է դառնա նախագծային գործունեության կազմակերպիչ, նախագծի առաջնորդ, խորհրդատու: Կրթության մեջ նախագծային մեթոդը դիդակտիկ միջոց է սովորողների ճանաչողական գործունեությունը ակտիվացնելու, ստեղծագործական կարողությունը զարգացնելու և միևնույն ժամանակ որոշակի անձնային որակներ ձևավորելու համար: Կան երեք «սյուներ», որոնց վրա հենված է այս տեխնոլոգիան՝ անկախություն, ակտիվություն, արդյունավետություն: Է.Ս.Պոլատը տալիս է նախագծի մեթոդի հետևյալ սահմանումը ժամանակակից իմաստով. «մեթոդ», որը ենթադրում է «կրթական և ճանաչողական տեխնիկայի որոշակի շարք, որը թույլ է տալիս լուծել որոշակի խնդիր ուսանողների անկախ գործողությունների արդյունքում՝ այդ արդյունքների պարտադիր ներկայացմամբ: Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի նպատակը տարաբնույթ խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունների ձևավորումն է, սովորողների ինքնազարգացման ապահովումը: Նախագծման նյութականացված արդյունքը ուսումնական նախագիծն է, որը դիտարկվում է որպես սովորողների կողմից ուսումնական խնդրի ինքնուրույն, հանգամանակից ուսումնասիրում և լուծում:

Նախագծում գիտական բաղադրիչը տրամաբանորեն փոխկապակցված է հուզաարժեքային, ստեղծագործական բաղադրիչների հետ՝ որոշելով տվյալ նախագծի՝ անձի համար գործնական-կիրառական նշանակությունը և ինքնուրույն իրականացման հնարավորությունը: Ժամանակակից ընկալմամբ՝ նախագծային ուսուցման տեխնոլոգիայի առանցքային գաղափարն է. «ինչ սովորում եմ, գիտեմ ինչի համար է ինձ պետք, որտեղ և ինչպես»:

## **Գլուխ 2. Սովորողների հետաքրքրությունը բարձրացնող մեթոդներ և մոդելներ**

*Այս աշխարհում կրթված մարդը ոչ այնքան գիտելիքներով զինված մարդն է, որքան գիտելիք ձեռք բերելու, գործնականում դրանք օգտագործելու և դա նպատակային կատարելու ունակը:*

**Համատեղ դասավանդում: Համատեղ դասավանդման արդյունավետությունը:**

- Ուսուցչի օգնականների գործառույթների շրջանակն առավել հստակ է դառնում ուսուցման նոր ռազմավարության՝ համատեղ դասավանդման կիրառման դեպքում, որը կտրուկ հակադրվում է սովորողների ուսուցման ավանդական մոդելին: Համագործակցությունը ուսուցչի հետ խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում): Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված

դասապրոցեսում: Համատեղ դասավանդման հիմնական բաղադրիչն առնվազն 2 դասավանդող մասնագետների համագործակցված աշխատանքն է, որը ներառում է սովորողների բազմազանություն, դասի պլանավորում, համատեղ դասավանդում, գնահատում՝ ամբողջ դասաժամի օպտիմալ կիրառմամբ: Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ծրագրային նյութի յուրացման ավելի մեծ հնարավորությունների ընձեռում և այլն: Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար.

- սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,
- ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,
- մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում,
- առաջադիմության ապահովում,

անհատական կարիքների և անհրաժեշտ հարմարեցված միջավայրի ապահովում: Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա (Shumway, 2011)<sup>1</sup>: Համատեղ դասավանդման առավելություններն ուսուցիչների և համագործակցող մասնագետների համար.

- համագործակցության հմտությունների ընդլայնում,
- դիտարկելու և խնդրի լուծումը գտնելու այլընտրանքներ,
- դասավանդման այնպիսի մոտեցումների կիրառում որոնք միայնակ հնարավոր չէ իրականացնել,
- դասաժամի օպտիմալ օգտագործում,
- սովորողների կրթական կարիքների բավարարում,

- աջակցություն դասի պլանավորման և իրականացման բոլոր փուլերում,
- անհրաժեշտ տեխնիկական միջոցների, պարագաների և նյութերի համատեղ նախապատրաստում,
- միջավայրային խոչընդոտների թիմային հաղթահարում,
- դասարանի առաջադիմության ապահովում,
- դասարանի կառավարման մոտեցումների կատարելագործում,
- ուսումնական պլանի առավելագույնս իրականացում,
- մետաճանաչողություն՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանում:

Համատեղ դասավանդման մոդելները Համատեղ դասավանդումն իրականացվում է մի քանի տարբերակներով: Կիրառման մոդելն ընտրվում է ուսուցանվող թեմային և սովորողների բազմազանությանը համապատասխան: Մոդելներն ընտրվում են՝ հաշվի առնելով նաև, թե ովքեր են համատեղ աշխատելու, քանի որ դասավանդող ուսուցչի հետ համադասավանդող կարող է լինել ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, լոգոպեդը, այլ առարկայական ուսուցիչները, ինչպես նաև ծնողները կամ սովորողները՝ հիմնականում բարձր դասարաններից : Տարբեր երկրներում կիրառվող համատեղ դասավանդման մոդելները բազմազան են, դրանք բոլորն էլ նպաստում են դասարանի կրթական մակարդակի բարձրացմանը, արդյունավետ ուսումնառության ապահովմանը և խթանում են սովորողների ակտիվ մասնակցությունը: Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

1. Աջակցող դասավանդում
2. Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում,
3. Զուգահեռ դասավանդում,
4. Այլընտրանքային դասավանդում,
5. Թիմային դասավանդում

**Աջակցող դասավանդման մոդել:** Այս մոդելի դեպքում ուսուցիչներից մեկը դասավանդում է՝ ստանձնելով դասարանի կառավարման դերը և տալով ընդհանուր առաջադրանքներ, իսկ երկրորդ ուսուցիչն (ուսուցչի օգնականը) օգնում է մյուսին, որպեսզի կարողանան հասնել համատեղ պլանավորած դասի նպատակին:

Նախապես մշակված քայլերի միջոցով և անհատական ուղղորդումներով ուսուցչի օգնականը մոտենում է բոլոր այն սովորողներին, ովքեր ուսուցանվող նյութն ընկալելու, դասարանի կարգուկանոնին հետևելու և ինքնուրույն աշխատելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն՝ ապահովելով դասապրոցեսին առավելագույնս ներգրավվելու և հնարավորինս յուրացնելու նախատեսված նյութը: Այս մոդելը հնարավորություն է տալիս անհատական աջակցություն ցուցաբերել նաև ԿԱՊԿ ունեցող սովորողներին:

#### **Ուսուցման**

**կայանների տեղափոխման դասավանդման մոդել :** Դասավանդման այս ձևում սովորողներն աշխատում են փոքր խմբերով՝ հիմնականում ըստ սովորողների գիտելիքների և կարողությունների մակարդակի, պայմանականորեն դրանք կոչվում են կայաններ: Դասարանում սեղանները վերադասավորվում են՝ կազմելով 3 առանձնացված կայաններ: Յուրաքանչյուր խումբն ունենում է իր առանձին նպատակը՝ կարողությունների մակարդակին համապատասխան, երբեմն նաև առանձին թեմա, եթե երկկազմ և եռակազմ դասարան է: Նախապես բաժանված խմբերն աշխատում են ուսուցման կայաններում նախօրոք ուսուցչից ստացած բանավոր կամ գրավոր հրահանգներով, աշխատանքային գործընթացն ինքնուրույն է կազմակերպվում, կամ էլ ուղղորդվում է ուսուցչի և ուսուցչի օգնականի կողմից, որոնք բաժանում են կայանները միմյանց միջև: Սովորողները դասի ընթացքում սահմանված որոշակի ժամանակահատվածում լինում են բոլոր երեք կայաններում, այսինքն՝ բոլոր երեք խմբերը դասի ընթացքում իրականացնում են նույն գործողությունները, սակայն՝ տարբեր ժամանակահատվածներում :Զուգահեռ դասավանդման մոդել Երկու ուսուցիչները (կամ ուսուցիչը և ուսուցչի օգնականը) միասին են պլանավորում դասը, սակայն նրանցից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր խմբի ուսուցման արդյունավետության համար: Դասարանում ընթանում է զուգահեռ դասավանդում՝ երկու տարբեր խմբերով: Խմբերի բաժանման սկզբունքը, որպես կանոն, կախված է

լինում սովորողների գիտելիքների կարողությունների մակարդակից կամ նրանց սովորելու ոճերի ընդհանրություններից: Յուրաքանչյուր ուսուցիչ իր խմբի հետ աշխատում է՝ կիրառելով իր ընտրած մոտեցումները, սակայն դասի նպատակը երկու խմբերում նույնն է: Սա առավել քիչ օգտագործվող մոդելներից է, որի կիրառման ժամանակ երկրորդ ուսուցիչը պետք է ուսուցանվող առարկայից գիտելիքներ ունենա:

**Այլընտրանքային դասավանդման մոդել:** Այս մոդելի կիրառման ընթացքում դասարանում ձևավորվում է սովորողների երկու խումբ: Դասավանդող ուսուցիչներից մեկն աշխատում է սովորողների՝ քանակով ավելի մեծ խմբի հետ, իսկ երկրորդ դասավանդողը (ուսուցչի օգնականը) մինևույն ժամանակ աշխատում է մյուս՝ ավելի փոքր խմբի հետ՝ նույն թեմայի շուրջ նախապես համատեղ մշակված անհատական ծրագրով: Սա հիմնականում կիրառվում է այն սովորողների արդյունավետ ներգրավման ու դասավանդման համար, ովքեր ունեն ԿԱՊԿ: Մինչ մեծ խմբի հետ աշխատող ուսուցիչը հանձնարարում է սովորողներին գործնական կամ ինքնուրույն աշխատանք, մյուս ուսուցիչը փորձում է ուղղորդել և աջակցել սովորողներին վերհիշելու անցած նյութը և կատարել նախապես պլանավորած անհատական աշխատանքները: Այս տարբերակը կիրառվում է դասի մի փուլի ընթացքում, չի խրախուսվում այս մոդելով նոր նյութ հաղորդել սովորողներինՏիքա և ուրիշներ: Թիմային դասավանդման մոդել Այս մոդելում դասավանդողներից մեկը սովորեցնում է դասի բովանդակային մասը, իսկ մյուսը լրացնում է նրան՝ մինևույն նպատակի շրջանակներում տալով հարցադրումներ, ծավալելով քննարկումներ կամ առաջարկելով գործնական աշխատանքներ սովորողների մինևույն խմբին: Դասավանդողները կարող են փոխվել դերերով կամ շարունակել այնպես, ինչպես սկսել են, շատ ավելի կարևոր է այս մոդելը նախապես պլանավորել առավել փոքր քայլերով, որպեսզի կարողանան սահուն կերպով միմյանց փոխլրացնել: Կարևոր է իմանալ՝ համատեղ դասավանդելը միշտ չէ, որ գործում է կատարյալ կերպով: Հիմնական նախադրյալն այն է, որ ուսուցիչները կարողանան միմյանց հետ ճիշտ համագործակցել, նույնիսկ այն դեպքերում, երբ նրանք ունենում են տարաձայնություններ՝ կապված դասավանդման մոդելի ընտրության, ռազմավարությունների մշակման կամ դերերի բաժանման հետ: Սկզբունքորեն կարևորվում է դասի համատեղ պլանավորումը, ինչպես

նաև՝ սովորողների գնահատման և հետադարձ կապի տրամադրման փուլերի համաձայնեցված իրականացումը: Համատեղ դասավանդման հիմնական նպատակը բոլոր, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնասիրության որակի ապահովումն է նույն դասարանում: Ուսուցիչների մեծ մասն անկախ այն բանից, թե նախկինում ինչ մեթոդներով է աշխատել, համատեղ դասավանդման մեթոդն ընդունում է այնպես, կարծես միշտ էլ իմացել է ուսուցման այդ ճանապարհը: Համատեղ դասավանդման մեթոդն ուսումնասիրելու և գործնականում գոնե մեկ անգամ կիրառելու հնարավորությունից հետո արդեն նրանք դասավանդման նման փորձն ընդունում են որպես երեխայի բնականոն զարգացմանը նպաստող երևույթ: Մի անգամ նման փորձառությունն ձեռք բերած ուսուցիչը համատեղ դասավանդումը խանդավառությամբ փորձում է իրականացնել:

Նորարարական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով հնարավոր է.

- ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը՝ համակցելով ուսուցման ավանդական մեթոդների հետ,
- սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման դյուրինացումը և նրանց առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացումը,
- բոլոր սովորողների համար որակյալ և արդիական կրթություն ստանալու հավասար պայմանների ապահովումը՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող, գյուղական, սահմանամերձ ու մեկուսացված բնակավայրերի և այլ խոցելի խմբերից երեխաների համար

Որպեսզի կազմակերպման տարբեր եղանակներն արդյունավետ լինեն, ուսուցիչը պետք է ծանոթ լինի նորագույն մեթոդներին, նորագույն տեխնոլոգիաներին ու ծրագրերին, գիտենա, թե ինչպես են դրանք օգտագործվում, տեղյակ լինի, թե ինչպիսի առավելություններ է տալիս դրանց կիրառումը, ինչպես նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասավանդման գործընթացում: Շատերը հաջողությամբ կիրառում են ժամանակակից մանկավարժական



տեխնոլոգիաները (խմբային տեխնոլոգիա, աշակերտակենտրոն ուսուցում, խնդրի ստեղծում, դասախոսությունների և սեմինարների համակարգում, օգտագործում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, խաղային տեխնոլոգիաներ, մեթոդներ, դերային և բիզնես խաղեր, ինտեգրված դասեր), իրականացվում են այս տեխնոլոգիաներին համապատասխան ակտիվ դասավանդման մեթոդներ:

**1. Ինքնուրույն աշխատանք** Այս դեպքում աշխատանքը կարող է կատարվել ինքնուրույն, զույգերով կամ խմբերով: Այս կարգի աշխատանքի նպատակն այն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն: Առաջադրանքները չեն առանձնանում՝ հաշվի առնելով առանձին անհատների պահանջները, բոլորը միևնույն առաջադրանքն են կատարում: Առաջադրանքներն ընտրելիս հաշվի չեն առնվում աշակերտների անձնական հատկանիշների ու կարողությունների տարբերությունները:[1]

## **2. Համագործակցային ուսուցում**

Համագործակցային ուսուցումը հաջողված մեթոդ է, որի միջոցով գերազանց հաղորդակցություն է լինում սովորողների միջև և ստեղծում է ակտիվ թիմային աշխատանք: Շատ արժեքավոր է սկսնակ ուսուցիչների համար: Համագործակցային ուսուցումը դրսևորվում է փոքր թիմերով, որտեղ տարբեր մակարդակի աշակերտներ են մասնակցում և կիրառում են բազմազան գործունեություններ ըստ ուսումնական պլանի՝ ամրապնդելու համար իրենց գիտելիքները: Խմբում յուրաքանչյուր աշակերտ իրեն համարում է կարևոր:

**Թիմային աշխատանք.** Հետազոտությունը ցույց է տալիս, որ թիմային աշխատանքը ունի դրական ազդեցություն սովորելու դասապրոցեսի ժամանակ, քանի որ այն ստեղծում է մի միջավայր, որտեղ սովորողները սովորեցնում և բացատրում են հասկացությունները միմյանց: Այն ամրապնդում է տեղեկատվությունը, որը հսկվում է ղեկավարի կողմից: Այն խրախուսում է աշակերտներին արժևորել թիմային աշխատանքը և հասնել առավել բարձր արդյունքների, սովորեցնելով աշակերտներին հմտություններ, որոնք կարևոր են մասնագիտական գործընթացի ժամանակ:

Գնահատման գործընթացը նույնպես թիմային է և նրանք պետք է ապահովեն հետադարձ կապը: Այս մեթոդի շնորհիվ աշակերտները զարգացնում են միմյանց հետ շփվելու կարողությունները ուրիշներին սովորեցնելու միջոցով, ինչպես նաև քննարկելու, բացատրելու, հասկանալու կարողությունները:

Թեման բաժանվում է մասերի և սովորողներին լայն հնարավորություն է տալիս հաղթահարելու առավել բարդ առաջադրանքները: Նրանք դառնում են պատասխանատու, վերահսկում են ժամանակը, ավելի արդյունավետ են պլանավորում: Ուսուցիչը օգնում է նրանց նոր խնդիրները հաղթահարել յուրովի, որն էլ իր հերթին նպաստում է բարելավելու ուսուցչի հեռանկարները հետագայում ավելի լավ դասավանդելու համար: Ուսուցիչը ուսուցչի օգնականի հետ պետք է հսկի խմբի բոլոր անդամներին ակտիվ մասնակցելու համար, օժանդակի սովորողներին անհրաժեշտության դեպքում: Այս մեթոդը ավելի ժամանակատար է քան ավանդական մեթոդները: Երբեմն աշակերտները վիճաբանում են որոշումներ կայացնելիս, նրանց հայացքները տարբերվում են, սակայն ուսուցչի օգնությամբ մի ընդհանուր հայտարարի են գալիս: Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել բնագիտական առարկաների ժամանակ և բարդ տեղեկատվություն հաղորդելու ժամանակ: Խորհուրդ է տրվում կիրառել ուսուցչի բացատրելուց հետո:

**«Խճանկար կամ Ջիգսո» մեթոդը** համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում:

### **Մեթոդի նպատակները**

1. Նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն՝ անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին:

2. Նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռնել:

3. Ընկերների հետ համագործակցելով՝ օգնել գտնելու առաջադրված հարցերի պատասխանները:

4. Մշակել փորձագիտական կարողություններ՝ ըստ տրված նյութի ամբողջացնելու և հաղորդելու տեղեկատվությունը:

5. Հնարավորություն ստեղծել միաժամանակ դառնալու և սովորող և սովորեցնող:

6. Նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

### **Խճանակարի փուլերը**

#### ***Նկարագրությունը***

Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում: Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:

Աշխատանք փորձագիտական խմբում Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը:

Աշխատանք ուսումնական խմբում Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:

Ավարտական աշխատանք Աշակերտները անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:

Ամփոփում Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

#### **«Խճանակար»-1**

1. Թեման բաժանել առանձին ամբողջական մասերի, հատվածների: Կարևոր է հաշվի առնել աշխատանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրել տարբեր բարդության ու հազեցվածության հատվածներ:

2. Ստեղծել չորս-հինգ հոգուց բաղկացած համագործակցային խմբեր (նպատակային խմբեր ձևավորելիս հնարավորության դեպքում հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները):

3. Համագործակցային խմբերում մասնակիցներին համարներ են տրվում(1,2,3,4...):

4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերում ( 1.1,1...; 2.2,2... և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք ( օրինակ՝ եթե նյութը հատվածների է բաժանվել,

փորձագետների 1-ին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն):

Խմբային աշխատանքների ընթացքը կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում սովորողներն իրենք կարող են մշակել իրենց խմբի աշխատանքային պլանը: Իսկ սա իր հերթին պայմանավորված է նրանով, թե «Խճանկար» մեթոդը դասի ընթացքում կամ ուսուցման մեջ ինչ տևողությամբ է կիրառվում:

- Առաջադրանքը կատարելիս աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմություններ կամ նույն հեղինակի այլ պատմվածքները կարդալ:

- Առանձին հետազոտությունների առարկա կարող են դառնալ ժամանակակից մոտեցումները տվյալ հարցի վերաբերյալ:

5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբեր և հաշվետվություն են տալիս խմբին իրենց փորձագիտական խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում:

- ներկայացվում են խմբային քննարկումների, աշխատանքների արդյունքները,
- աշակերտները իրենց սովորածը սովորեցնում են միմյանց,
- միավորվում, ամբողջանում են գիտելիքները:

6. Ամփոփիչ փուլը առաջանում է, երբ համագործակցային խմբերը 2-3 րոպեի ընթացքում ամբողջ դասարանին իրենց նախընտրած ձևով ներկայացնում են թեման:

Ուսուցիչը թեմայի ամփոփման տարբեր հանձնարարություններ կարող է տալ («Ո՞րն էր ամենակարևորը», «Համառոտ ձևակերպե՛ք թեմայի գլխավոր գաղափարը», «Ինչի՞ վրա խումբն առավելագույն ուշադրություն դարձրեց»...):

Այս քայլը հնարավորություն է տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

«Խճանկար»-2

Մեթոդի նկարագրությունը

1. Աշակերտները աշխատում են 4 հոգանոց թիմերով (համագործակցային խմբերով): Խմբի անդամներին տրվում են տարբեր փորձագիտական թերթիկներ: Փորձագիտական թերթիկներում զետեղված հարցերը նպատակ ունեն ուղղորդելու տվյալ աշակերտի ընթերցանությունը: Թերթիկները տարբեր են, քանի որ հետագայում տարբերվելու են աշակերտների պարտականությունները: Նրանք օգնելու են հիմնական խմբին՝ համակողմանի յուրացնելու իրենց վստահված և փորձագիտական թերթիկում նշված հատվածը:

2. Աշակերտներին տրվում է որոշակի ժամանակ՝ ամբողջ նյութը կարդալու համար: Բոլորը պետք է նյութը կարդան ամբողջությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով

այն հատվածներին, որոնք պատասխանում են իրենց փորձագիտական թերթիկում նշված հարցերին և համապատասխան գրառումներ անեն:

3. Աշակերտները վերախմբավորվում են ըստ թերթիկների՝ կազմելով փորձագիտական խմբեր, որտեղ նրանք քննարկում են թերթիկում նշված հարցերը: Յուրաքանչյուր խմբում ընտրվում է քննարկումը վարող անձ: Ուսուցիչն այդ ընթացքում շրջում է խմբերում որպես մասնակից, անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ անում:

4. Փորձագետները վերադառնում են իրենց նախնական համագործակցային խմբերը և ընկերներին սովորոցնում փորձագիտական խմբում յուրացրածը: Փորձագետները ոչ միայն զեկուցում, այլև պատասխանում են հարցերին և հավաստիացնում, որ բոլորը յուրացրել են տվյալ հատվածը:

5. Վերջին քայլը գնահատումն է: Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտներին գրավոր նշել, թե ինչ ներդրում են իրենք ունեցել խմբի ընդհանուր աշխատանքում:

Մեթոդը կիրառման լայն հնարավորություններ ունի: Այն հավասարապես կարող է օգտագործվել բոլոր առարկաների դասերին: Առավել նպատակահարմար է կիրառել հատկապես ծավալուն, փաստերով ու տվյալներով հագեցած նյութերի վրա աշխատելիս: «Խճանկարը» հիմնականում դասի իմաստի ընկալման փուլի մեթոդ է, որը, սակայն, ներառում է նաև կշռադատման փուլը:

Մեթոդի առավելությունները

- Նյութի բազմակողմանի և ավելի խոր ուսումնասիրություն,
- խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը,
- աշակերտը հանդես է գալիս և՛ սովորողի, և՛ սովորոցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու,
- ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործում,
- հաշվետու լինելու կարողության և անձնական պատասխանատվության ձևավորում,
- նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում,
- մոտիվացիա և հետաքրքրությունների բավարարում,
- նոր նյութի յուրացում:

Մեթոդի սահմանափակությունները

- անհրաժեշտ ռեսուրսների ոչ բավարար քանակ,
- հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի և ժամանակի անհամապատասխանություն:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչն իր համար պետք է հստակեցնի դասը, նրա խնդիրները: Յուրաքանչյուր դաս կարող է ունենալ մի քանի խնդիրներ: Նրանք պետք է լինեն կոնկրետ: Ուսուցիչը դասի համար պետք է նախատեսի այնպիսի խնդիրներ, որոնք աշակերտներին կտանեն մտածողության տարբեր տեսակետների միջոցով՝ ինֆորմացիայի տիրապետում, կյանքում դրանց կիրառում: Դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչը նախքան նոր նյութին անցնելը պետք է վեր հանի աշակերտի նախնական գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ, իսկ եթե այդ գիտելիքները բավարար չեն, որոշակի բացատրություններ տա, ապա անցնի դասանյութին: Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է հստակեցնի գնահատման խնդիրը: Գնահատման համար ուսուցիչը պետք է ստանա ապացույցներ, որ աշակերտները՝

ա ) Յուրացրել են դասանյութի բովանդակությունը.

բ ) Ձեռք են բերում մտածողության և սովորելու համապատասխան փորձառություն:

Գնահատումը կարող է իրականացվել դասին զուգահեռ, նրա տարբեր փուլերում և ոչ թե միայն վերջում, ինչպես դա արվում է ավանդաբար: Սովորողների գիտելիքների գնահատման մասին որոշումները ներառում են՝ դասավանդման կառավարումը, սովորողներին կրթական տարբեր ծրագրերում ներառելը, նրանց համապատասխան կարգեր տալը, ուղղորդելը, խորհուրդներ տալը, կրթական հնարավորությունները բացահայտելը, ինչպես նաև նրանց իմացությունը հավաստագրելը:

Փորձարարական դասերից հետո եկա այն եզրակացության, որ դասաժամերն ավելի արդյունավետ են դառնում ուսուցման փոխներգործուն և համագործակցային մեթոդների, բազմազան հնարների օգտագործման, դիտակտիկ և ստեղծագործական խաղերի կազմակերպման շնորհիվ:

Տրամաբանական մտածողության զարգացումն ավելի դյուրին ու հեշտ է, երբ կարևորվում է աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը և խրախուսելի է դառնում գիտելիքների ձեռքբերումը: Համագործակցային ուսուցումը փոխում է

աշակերտի և ուսուցչի դերը դասարանում: Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի միջև: Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները: Համագործակցային ուսուցումն օգնում է աշակերտներին ներգրավելու բանավեճի և քննարկել տարբեր հեռանկարներ: Համագործակցային ուսուցման վարժությունները կարող են լինել 5 րոպեանոց կամ էլ մի ամբողջ դասաժամ:

Ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդները, հնարներն ու միջոցները պետք է կիրառել տարրական դասարաններում, բայց դրա հետ մեկտեղ հաշվի առնել սովորողի տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները: Տարրական դասարաններում արդյունավետ մեթոդներից են՝ նախագծային, ծրագրավորված, անհատական, փոխներգործուն, ինտերակտիվ և այլ հարյուրավոր մեթոդներ, որոնք պետք է ճիշտ և տեղին կիրառել:

Ուսուցման կայանների տեղափոխման դասավանդման մոդելով ունեցել ենք շատ հետաքրքիր ու հաջողված դաս տարբեր դասարաններում, և եկել եմ այն եզրակացության, որ յուրաքանչյուր ուուցիչ պետք է օգտագործի տարբեր մեթոդներ տարբեր դասերի ընթացքում: Եթե մենք ուզում ենք մեր դասն ավելի արդյունավետ լինի և ավելի հետաքրքիր ու նպատակային: Ժամանակակից ուսուցիչը պետք է կարողանա աշխատել նոր ուսումնական միջոցներով, որակյալ կրթություն ապահովելու նպատակով: Նոր տեխնոլոգիաների կիրառումը համապատասխանում է ժամանակակից դպրոցի առջև ծառայած պահանջներին: Կրթական տեխնոլոգիաների շնորհիվ հիմքերը են դրվում ապագայում կյանքում հաջող ադապտացման և ինքնիրացման համար: Ուսուցչի գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում դպրոցականների անկախ դատողությունների զարգացումը, ուստի մենք ձգտում ենք գիտելիքները պատրաստի չհաղորդելու ձևը: Ուսուցիչը երբեք չպետք է նույն տեղում կանգ առնի: Նա միշտ պետք է կատարելագործի իր մասնագիտական հմտությունները, սովորի և իրականացնի տարբեր մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը, օգտագործի տարբեր ձևեր և մեթոդներ դասերի անցկացման ընթացքում: Այս բոլոր մեթոդները և մեթոդական

հնարները օժանդակում են դասավանդողների գործունեությանը, դարձնում են բազմաբովանդակ, համապատասխան սովորողի հետաքրքրություններին, որոնք նպաստում են փոխկապակցված, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Սովորողների համար օգտակար և արդյունավետ է սովորել այնպիսի մեթոդական հնարներով, որոնք զարգացնում են քննադատական, ստեղծագործական մտածողության հմտությունները, ինքնուրույն մտածելու կարողությունը :

Նորագույն տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն և ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Տեխնոլոգիաներն աշակերտներին նոր պահանջներ են ներկայացնում հիմնական կարողություններից բացի՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողությունների տիրապետմանը: Նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3
2. <https://rm.coe.int/arm-referenceframework-vol-3/1680a1b758/30/12/2017:>
3. Ձևավորող գնահատման 9 հնար, <https://kznakgnahatum.blogspot.com/p/9.html>
4. <https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html>
5. <https://innostud.am/application/library/5ced296a.pdf>
6. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008թ
7. [https://www.wikiwand.com/hy/%D4%BD%D5%B3%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80\\_%D5%AF%D5%A1%D5%B4\\_%D5%8B%D5%AB%D5%A3%D5%BD%D5%B8](https://www.wikiwand.com/hy/%D4%BD%D5%B3%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80_%D5%AF%D5%A1%D5%B4_%D5%8B%D5%AB%D5%A3%D5%BD%D5%B8)